

ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ռուզաննա Արիստակեսյան

Բանասիրական գիտությունների դոկտոր

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

ORCID ID: 0000-0002-2748-0249

aristakesyanr@yahoo.com

DOI: 10.54503/1829-0116-2025.2-150

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԵՐԶՆԿՅԱՆԻ ԳՐԱՔՆԱԴԱՏԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐՈՒՄ^{*}

Բանալի բառեր – *Եղիշե Չարենց, Սուրեն Երզնկյան, «Մարտակոչ», գրաքննադատական հոդվածներ, ապագայապաշտական որոնումներ, Մայակովսկի, Կարա Դարվիշ:*

Այս հոդվածում առաջին անգամ համակողմանիորեն քննության են ենթարկվում Մ. Երզնկյանի գրաքննադատական մոտեցումները Չարենցի պոեզիայի վերաբերյալ: Դրանք ընդգրկում են 1922–1925 թվականները:

Ուսումնասիրության նպատակը չարենցագիտության պատմության առանձին էջերի, ինչպես նաև Չարենցի գրական ժամանակին և միջավայրին վերաբերող տարբեր փաստերի բացահայտումն ու լրացումն է, ժամանակի գրաքննադատական մտքի ընդհանուր առանձնահատկությունների, մասնավորապես Մ. Երզնկյանի քննադատական դիտարկումների լուսաբանումը:

Պատմամշակութային և համեմատական քննության փորձը հնարավորություն է ընձեռում նյութը ներկայացնելու լայն և խորքային ընդգրկումով:

Ruzanna Aristakesyan

Doctor of Philology

Institute of Literature after M. Abeghyan of NAS RA

ORCID ID: 0000-0002-2748-0249

aristakesyanr@yahoo.com

YEGHISHE CHARENTS IN THE LITERARY- CRITICAL OBSERVATIONS OF SUREN ERZNKYAN

Keywords: *Yeghishe Charents, Suren Erznkyan, “Martakoch”, literary-critical articles, futurist explorations, Mayakovsky, Kara Darvish.*

¹ Սկիզբը՝ նախորդ համարում:

^{*} Հոդվածն ընդունվել է տպագրության 20.05.2025 թ.:

Ուղարկվել է գրախոսության 03.07.2025 թ.:

This article presents, for the first time, a comprehensive examination of S. Yernkyan's literary-critical approaches to Charents's poetry, covering the period from 1922 to 1925.

The aim of the study is to reveal and supplement certain pages in the history of Charents studies, as well as facts concerning Charents's literary period and environment. The research also aims to present the general characteristics of the literary-critical thought of the time, particularly through the critical observations of S. Yernkyan.

An attempt at historical-cultural and comparative analysis allows the material to be presented with both breadth and depth.

The article is intended for both academic and general readers.

Рузанна Аристакесян

Доктор филологических наук

Институт литературы имени М. Абегамян НАН РА

ORCID ID: 0000-0002-2748-0249

aristakesyanr@yahoo.com

ЕГИШЕ ЧАРЕНЦ В ЛИТЕРАТУРНО-КРИТИЧЕСКИХ НАБЛЮДЕНИЯХ СУРЕНА ЕРЗНКЯНА

Ключевые слова: *Егише Чаренц, Сурен Ерзнкян, «Мартакоч», литературно-критические статьи, футуристические поиски, Маяковский, Кара Дарвиш.*

В данной статье впервые всесторонне рассматриваются литературно-критические подходы С. Ерзнкяна к поэзии Чаренца, охватывающие период 1922–1925 годов.

Цель исследования: раскрыть и дополнить отдельные страницы истории чаренцеведения, а также факты, относящиеся к литературному периоду и окружению Чаренца. Исследование направлено также на освещение общих особенностей литературно-критической мысли того времени, в частности критических наблюдений С. Ерзнкяна.

Попытка историко-культурного и сравнительного анализа позволяет представить материал в широком и глубоком охвате.

Статья адресована как научной, так и широкой читательской аудитории.

Ներածություն

1920-ական թվականներին Սուրեն Երզնկյանը պետական-կուսակցական, հրապարակախոսական և խմբագրական գործունեությանը զուգահեռ ակտիվորեն մասնակցում էր նաև Թիֆլիսում և Բաքվում ծավալված խորհրդահայ գրական կյանքին, հանդես գալիս գրական-մշակութային խնդիրների վերաբերյալ վերլուծություններով, գրախոսություններով, բանավիճային հոդվածներով, որոնք տեղ էին գտնում «Կարմիր աստղ», «Մարտական» (Թիֆլիս), «Կոմունիստ» (Բաքու) թերթերում և «Դարբնոց» (-

Թիֆլիս), «Վիշկա», «Հայարտուն» (Բաքու) ամսագրերում: Դրանք ամփոփված են նաև առանձին գրքերով հրատարակված «Գրական ֆրոնտում» ժողովածուներում (1925, 1927):

Սուրեն Երզնկյանի գրաքննադատական հոդվածները, թեև գրված են գրական-գեղարվեստական հարցերում կուսակցական գծի հետևողությամբ, սակայն աչքի են ընկնում գրական խնդիրների խորքային իմացությամբ, մոտեցումների ինքնատիպությամբ, գրականության զարգացման ընթացքի ճիշտ ընկալումներով, նաև գեղարվեստական ճաշակով և գրական չափանիշների պահպանումով:

Նրա ուշադրության կենտրոնում էին ոչ միայն պրոլետարական գրականության, այլև պրոլետոլամատուրգիայի, նաև գրական կյանքի կազմակերպման տարբեր խնդիրներ:

«Չարենցիզմը» որպես պրոլետգրականության ճշմարիտ ճանապարհ

1920-ական թվականներին բուռն քննարկումներ են ծավալվում խորհրդահայ գրականության ընթացքի, զարգացման առանձնահատկությունների և հեռանկարների շուրջ:

Չարենցն այդ ամենի կիզակետում էր՝ և՛ որպես ազգային գրականության զարգացման նոր ընթացքը ձևավորող առանցքային ուժ, և՛ որպես գեղարվեստի ու գեղարվեստականության բարձր չափանիշ:

Գրապայքարի մի կողմում պրոլետատցիացիականներն էին, պրոլետարական գաղափարախոսության և գրական սխեմատիզմի հետևորդները՝ Հ. Հակոբյան, Ա. Վշտունի, Վ. Ալազան, Ն. Ջալյան և ուրիշներ, մյուս կողմում՝ Չարենցի շուրջ համախմբված գրական ուժերը՝ Մահարի, Արմեն, Բակունց և ուրիշներ: Այս թեժ հակամարտության հորձանուտում էին նաև գրաքննադատները:

Ս. Երզնկյանը Չարենցի տաղանդն ու գործը գնահատողների շարքում էր, ավելին՝ գտնում էր, պրոլետգրականությունը պետք է ընթանա Չարենցի բացած ճանապարհով: Բաքվի «Կոմունիստ» թերթի¹ 1925 թ., մարտի 1-ի համարում (թիվ 47) գետեղած «Չարենցի, թե գրական ռեակցիայի հետ» հոդվածում, շատ բարձր գնահատելով Չարենցի գեղարվեստական փորձը, համարձակորեն հայտարարում է. «Հարցը դրվում է շեշ-

¹ Բաքվի «Կոմունիստ» թերթը և ընդհանրապես Բաքվի հայ պրոլետգրողների ասոցիացիան, որ Երզնկյանի նախաձեռնությամբ հիմնվել էր 1925-ի փետրվարի 6-ին, շատ դրական վերաբերմունք ուներ Չարենցի հանդեպ, ինչի վկայությունը փետրվար-մարտ ամիսներին բանաստեղծին նվիրված տարբեր ցերեկույթների, երեկույթների, դասախոսությունների կազմակերպումն էր (նախատեսված էր Չարենցի շաբաթ, տևեց ամիս): Պարզ է, որ այդ ամենը պայմանավորված էր նաև Երզնկյանի գրական առաջնորդությամբ (Ազդ, 1925: 4):

տակի ու որոշ, թե հայ պրոլետգրականության զարգացումը պետք է ընթանա պոետ Չարենցի՝ հետ, թե՞ նույն Չարենցի կամ այսպես ավելի ճիշտ կլիներ ասել – *չարենցիզմի* հակառակ ու դեմ»: Ընդ որում, Երզնկյանը «ուղղակի և անխուսափողական պատասխանի» ակնկալիքով իր հարցադրումն ուղղում է նաև Թիֆլիսի և Երևանի պրոլետասոցիալիստներին: «Չարենցիզմը» դիտարկելով որպես հայ պրոլետգրականության զարգացման մայրուղի՝ նա ընդդիմանում է պրոլետարական գրող Հ. Հակոբյանի գրական վաստակի գերազնահատման փորձերին և ընդհանրապես «հակոբյանիզմին»՝ որպես անցած և ավարտված շրջափուլ: Երզնկյանը պարզաբանում է. «*Հակոբյանիզմը* – թեև այդպիսի հոսանք գոյություն չէ ունեցել մինչ-հոկտեմբերյան և հետհոկտեմբերյան հայ գրականության մեջ – գրական պրոգրեսսիվ երևույթ էր իր ժամանակին, 1905 և 1917 թթ. ծանր արանքում... Հոկտեմբերից հետո ցանկալ կամ փորձել նույն *հակոբյանիզմի* դրոշակի տակ վարել պրոլետասոցիալիստների գործունեությունը կամ պրոլետպոեզիայի որոնումները, – դա – ինչպես ասում է ֆրանսիական հայտնի ասացվածքը – ավելի քան մի ոճիր է, պարզապես *սխալ*» (Երզնկյան, 1925: 4):

Սա բավականին համարձակ տեսակետ էր գրական այնպիսի մի միջավայրում, որտեղ Հ. Հակոբյանը պրոլետարական մեծ գրողի անվիճարկելի համբավ ուներ, և տարին էլ, ըստ էության, հակոբյանական էր, քանի որ Երևանում, Թիֆլիսում, Բաքվում և Մոսկվայում ակտիվորեն նշվում էր ժողովրդական պոետի գրական գործունեության 30-ամյակը (Միմոնյան [Աքել], 1925: 1: Մկրտչյան [Ա. Մ.], 1925: 2):

Երզնկյանի համար հայ պրոլետգրականության հիմնադիրը Չարենցն է, և նա, ի հեճուկս բանաստեղծի դեմ նապոստոյան հայ «քուրմերի» (Վշտունի, Զարյան, Վանանդեցի և ուրիշներ) հարձակումների, համոզված պնդում է. «Հետ-հոկտեմբերյան գրականությունը սկսվում է Չարենցով, որը իր տաղանդի ուժեղ կնիքը դրեց նրա զարգացման վրա»: Ընդ որում, Երզնկյանի դիտարկմամբ, Չարենցը «խոշոր պրոլետպոետ» է ոչ միայն Խորհրդային Հայաստանի, այլև Խորհրդային Միության ընդգրկումով և այնպիսի հայտնի պոետների շարքում է, ինչպիսիք են Մայակովսկին և Եսենինը (այս շարքում Երզնկյանը հիշատակում է նաև Բեզմենսկու և Բեդնու անունները): «Եղիշե Չարենցը, – գրում է նա, – համարձակ կարող է չափվել նրանցից ամեն մեկի հետ, դիմանալ մրցության, առանց որևէ ներողամտություն հայցելու իր ամենախիստ քննադատ-բաղդատողից: Նա ոչ մեկին չի զիջում մեծությամբ»: Ապա շարունակում է. «Եթե ռուսական բեմական գրականությունը ունենար այնպիսի գեղեցիկ պրոլետարական գործ, որպիսին է Չարենցի *Կապկազ-Թամաշան*, նա կկլանվեր թատրոնի

ու մասսաների կողմից: Մեյերխոլդը մի ամբողջ «թատրոնական էպոխա» կստեղծեր նրա բեմադրությամբ» (Գրական վավերագրեր, 2020: 545): Իսկ հայ իրականության մեջ «Կապկազ»-ի հանդեպ անտարբերությունը պայմանավորում է մեր բեմադրիչների ապիկարությամբ:

Երզնկյանը շատ բարձր է գնահատում նաև արտասահմանյան ուղևորության ընթացքում Չարենցի գրած պոեմները՝ «Լենինն ու Ալին», «Ստամբոլ», «Պոեմ հերոսական», «Կոմունարների պատը Փարիզում», դրանք դիտարկելով որպես ստեղծագործական նոր փուլի գեղարվեստական արտահայտություններ:

Հոդվածի վերջում Երզնկյանը մեկ անգամ ևս հստակ, ուղիղ և համոզված պնդում է. «Պրոլետարսիացիների առաջ դրված է երկրնտրանք, կամ հայ պրոլետգրականության զարգացման ելակետ ընդունել *չաբենցիզմը*, կամ ծառայել *գրական ռեակցիային*»:

Մեր ընտրությունը կատարված է արդեն» (Գրական վավերագրեր, 2020: 545):

Հակոբյանի արվեստի վերագնահատության Երզնկյանի այս փորձին հակադրվում է Ս. Խանոյանը: Վերջինիս «Մարտակոչ»-ի մարտի 6-ի համարում գետեղված «Մի գրական թյուրիմացություն» վերտառությամբ անդրադարձը, սակայն, ոչ այնքան գրական խնդիրների, որքան Հակոբյանի հանդեպ ունեցած իր ընկերական վերաբերմունքի մասին է (Խանոյան, 1925: 1):

«Զգացմունքների արգասիք» այս անդրադարձին Երզնկյանը [Ե. Սուրեն] հակադարձում է «Իսկապես գրական թյուրիմացություն» հոդվածով (Գրական վավերագրեր, 2020: 546): Նա ստիպված է լինում մեկ անգամ ևս պարզաբանել, որ, գնահատելով հանդերձ Հակոբյանի նախահեղափոխական շրջանի գրական վաստակն ու դերը, միաժամանակ հարկ է համարում «կեղծ ու շինծու, ճահճացած ու անկենդան» գրական մթնոլորտում հնչեցնել այն պարզ ճշմարտությունը, որ Հակոբյանն այլևս անցյալ է, և նրա պոեզիան չի բավարարում հեղափոխական ներկայի ստեղծագործական պահանջները: Պրոլետգրականության արջի ծառայություն մատուցողներին Երզնկյանը զգուշացնում է հեռու մնալ արհեստական, անտեղի և ուռճացված որակումներից, որովհետև չի եղել և չկա «հակոբյանիզմ»՝ որպես գրական դպրոց, այլ կա «չաբենցիզմ»՝ որպես նոր ժամանակների գրական հիմնական ուղղություն և չափանիշ: «Բայց Հակոբ Հակոբյանի գրական գործունեության *վերագնահատումը, լուրջ-քննադատական* վերաբերմունքը դեպի նրա գրական ծառայությունները,՝ գրում է Երզնկյանը,՝ հրամայողական անհրաժեշտություն դարձավ այն վայրկյանից, երբ հոբելյանից ու կոչումից հետո էլ հրապարակում շարունակվեցին միան-

գամայն մոռացության տրվել հետ-Հոկտեմբերյան գրականության և մասնավորապես պրոլետգրականության շահերը: Հակոբյանի գրական վաստակի *գերա*-գնահատումը – այնպիսի փիղային գերագնահատում, որի առաջ նսեմանում էին անգամ Դանտեների, Շեքսպիրների, Պուշկինների, Վերհարների իրական գնահատումները¹ – չէր կարող անգամ Հակոբ Հակոբյանի բարեկամներին – անգամ հենց ինքը ընկ. Խանոյանին չթելադրել՝ *զգուշացնել մեր սերունդը գրական թյուրիմացությունից* (Գրական վավերագրեր, 2020: 546):

Չարենցի հանդեպ նույն գնահատանքն է հնչում նաև «Վիշկա»-ում զետեղված Երզնկյանի [Ե. Սուրեն] «Եղիշե Չարենց» գրական դիմանկարում (Երզնկյան, 1925: 51-52): «Նա արդեն ստեղծել է մի ամբողջ *շկոշա* մեզանում,- գրում է Երզնկյանը:- Այդ որն է հայ բանաստեղծներից, որ չի կրել իր վրա Չարենցի ազդեցությունը, սկսած շնորհալիներից մինչև ապաշնորհները, պրոլետպոետներից մինչև ֆուտուրիստները և բոսայկության սիրահարները – բանվոր Ալազանից, Նայիրի Զարյանից, Գառնիկ Ղազարյանից, Լանտեից մինչև ավելի ծերերը՝ Գ. Աբովը, Ազատ Վշտունին և ուրիշները: Մեկի վրա ազդեցությունը եղել է անմիջական ու խիստ, մյուսի վրա՝ ավելի մեղմ ու անուղղակի, բայց բոլորն էլ ավելի կամ պակաս չափով ենթարկվել են նրան և ունկնդրել նրա եղանակներին, որովհետև չէին կարող չենթարկվել և չունկնդրել:

Չարենցը կարծես տարերային ուժով ճեղքում է մեր գրականության ետ-հոկտեմբերյան ճանապարհը և իր ետևից քաշում՝ կամա և ակամա՝ ամենին» (Գրական վավերագրեր, 2020: 482):

«Վիշկա»-ում տեղ է գտել նաև Բեռլինից մայիսի 14-ին Սուրենին հասցեագրած Չարենցի նամակը, որը գաղափարակից ընկերների միջև եղած գրական բարեկամության արտահայտություն է²:

¹ Երզնկյանն ակնարկում է Հակոբյանին նվիրված Վշտունու հայտնի ձոնը. «Մի Դանթե՞ կամ մի Պուշկին՞ն ես դու/- չէ՛, ի՞մ ընկեր,- ավելի ուժգին ես դու»: Մոսկվայի Լազարյան ճեմարանում 1925-ի հունվարի 24-ին տեղի ունեցած հոբելյանական միջոցառմանն ունեցած ելույթում պրոլետարական գրականության միջազգային բյուրոյի ֆրանսիացի գործիչ Էթիեն Լակոստը (Լյակոստ) Հակոբյանին համեմատում է Վերհարնի հետ: Այս որակումները ծաղրի են ենթակվել նաև Ասլանի «Երկու Վերհարն» ֆելիետոնում. «Առաջ Հայաստանը միայն լեռներ էր «արտադրում», իսկ այժմ...այժմ միմիայն բանաստեղծներ: Դե, սա հանցանք չէ Հայաստանի համար, մենակ ցավն էն է, որ քյասիբի կնկա պես շատ է ծնում, շա՛տ... Էն էլ տարեկան մի քանի անգամ, ու ամեն անգամին մի քանի հատ» (Ասլան, 1925: 1):

² Նամակին կցված է խմբագրության հետևյալ ծանուցումը. ««Վիշկա»-ի խմբագիր ընկ. Ե. Սուրենը ստացել է ընկ. Ե. Չարենցից հետևյալ նամակը, որից հանված են անձնական բնույթ կրող սկզբի և վերջի մասերը» (Գրական վավերագրեր, 2020: 571):

Այս նամակում Չարենցը երախտագիտություն է հայտնում իր արվեստի հանդեպ Բաքվի հայ պրոլետարիատի և Երզնկյանի ցուցաբերած ուշադրության համար, ապա անդրադառնում արտասահմանյան մտածումներին և իր հոգևոր-ստեղծագործական շրջադարձին¹: «Ամենից առաջ ասեմ,- գրում է նա,- որ արտասահմանը իմ մեջ առաջ բերեց մի հիմնական հեղաշրջում: Ես այդտեղ *նախ* արվեստագետ էի և *ապա* պրոլետարական, իսկ այստեղ ես դարձա՝ *նախ* պրոլետարական և *ապա* արվեստագետ»:

«Standart»-ից հետո սկիզբ առած Չարենցի ներքին այս հեղաշրջումն արտասահմանյան ուղևորության ընթացքում հստակվում, խորանում, ամբողջանում է՝ ազատագրելով նրան մոտիկ անցյալի բոլոր «իզմ»-երից և ձևապաշտ որոնումներից:

Երզնկյանը Չարենցի պոեզիայի ոչ միայն արժևորողն էր, այլև այդ պոեզիայի համար անգիջում պայքար մղողը, ընդ որում՝ այդ պայքարն ուղղված էր ինչպես խորհրդահայ, այնպես էլ միութենական գրական հակառակորդների դեմ: Այդպիսի համարձակ վերաբերմունքի օրինակ է 1925-ի հունիսին գրած «Սաննիկովի ծառայությունը» հոդվածը (Երզնկյան, 1927: 175-178): Այն ուղղված է ռուս բանաստեղծ, արձակագիր, «Կուզնիցա» մոսկովյան գրական խմբակի կազմակերպիչներից մեկի՝ Գ. Սաննիկովի դեմ, ով «Заря Востока»-ի գրական բաժնում տեղ գտած վերլուծության մեջ «իր *կոմպետենցիայից միանգամայն դուրս* անտեղի ու անիմաստ» հայտարարություններ էր անում հայ «հեղինակների, կիսահեղինակների և ո՛չ-հեղինակների» մասին: «Մի՞թե ինքը, ընկ. Գ. Սաննիկովը և ընդհանրապես Սաննիկովները չեն հասկանում,- վրդովված գրում է Երզնկյանը,- որ մենք *դասկանալ՝ նո՛ ճանաչում ենք և՛* Հակոբ Հակոբյանին, և՛ Ազատ Վշտունուն, և՛ Ամեդին, և՛ Շամունցին ու մեր ամբողջ գրական պլեադան, ինչպես նաև Ե. Չարենցին: Եվ պետք է լինել իսկապես հայ գրականության մեջ *միանգամայն պրոֆան* կամ *չարաչար խաբված*, դուրս գալու հրապարակ և օրը-ցերեկով որակելու Ազատ Վշտունուն որպես «տաղանդավոր պրոլետպոետ», իսկ «Ամբոխները խելագարված»-ի, «Ամենապոեմ»-ի, «Բաղիոպոեմ»-ի, «Երկիր Նայիրի»-ի, «Կապկազ»-ի, «Ստամբուլ»-ի և այլ գրական գործերի *իսկապես բացառիկ տաղանդավոր* հեղինակին համարել սոսկ *պապուտչիկ* Հոկտեմբերի»: Երզնկյանը մեկ

¹ Չարենցի գաղափարական-ստեղծագործական այս շրջադարձը ողջունել է Ս. Խանոյանը «Գրական աշխարհից (Ե. Չարենցի նամակի առթիվ)» անդրադարձում: Նրա նպատակն էր Չարենցի գրական բեկումնի օրինակով «ճամբի հրավիրել մոլորյալ այն պոետներին, որոնք խաբխափում են *նախկին չարենցիզմի* ցանցերում: Չարենցը ինքը ազատագրվել է այդ ցանցից, կարիք կա դուրս բերելու մյուս մանր ու մծեղներին...» (Խանոյան, 1925: 2):

անգամ ևս համոզված պնդում է, որ Սաննիկովի կողմից «պապուտչիկ» որակված Չարենցը Հոկտեմբերին նվիրված այնպիսի «անմեռ կտորներ» ունի, ինչպիսիք չկան ոչ միայն իր նշած հայ, այլև անգամ հետհոկտեմբերյան ռուս ամենատաղանդավոր գրողների ստեղծագործություններում:

Եզրակացություն

Սուրեն Երզնկյանը, լինելով Չարենցի դերն ու նշանակությունը կարևորող, նրա գրական հակառակորդների դեմ պայքարող քննադատներից մեկը, 1922-1925 թվականներին բանաստեղծի հանդեպ ունեցել է շատ հստակ և հետևողական վերաբերմունք՝ մի կողմից ժխտելով նրա ապագայապաշտական որոնումները և դրանք համարելով գրական ռեակցիայի գեղարվեստական արտահայտություններ, մյուս կողմից՝ շատ բարձր գնահատելով Չարենցի տաղանդը և դիտարկելով «չարենցիզմը» որպես պրոլետգրականության զարգացման հիմնական և «ուղիղ» ճանապարհ: Անշուշտ, Երզնկյանի գրաքննադատական վերլուծություններն ունեն պատմական համատեքստ՝ կուսակցական-գաղափարախոսական սահմանափակումների, գրականության և գեղարվեստի գնահատության մարքս-լենինյան մոտեցումների թանձր գունավորմամբ: Այնուհանդերձ, դրանք կարևոր են ժամանակի գրաքննադատական մտքի ընդհանուր պատկերը ներկայացնելու, Չարենցի և չարենցագիտության ճանապարհն ամբողջացնելու, ինչպես նաև ժամանակի համար Երզնկյանի բավականին համարձակ, հետաքրքիր և խորքային դիտարկումներն արձանագրելու տեսանկյունից:

Գրականության ցանկ

1. Ազդ, «Կոմունիստ», Բաքու, 1925, թիվ 43, փետրվարի 24, էջ 4:
2. Ազդ, «Կոմունիստ», Բաքու, 1925, թիվ 44, փետրվարի 25, էջ 4:
2. Ազդ, «Կոմունիստ», Բաքու, 1925, թիվ 45, փետրվարի 26, էջ 4:
3. Ազդ, «Կոմունիստ», Բաքու, 1925, թիվ 46, փետրվարի 27, էջ 4:
4. Ազդ, «Կոմունիստ», Բաքու, 1925, թիվ 47, մարտի 1, էջ 4:
5. Ազդ, «Կոմունիստ», Բաքու, 1925, թիվ 48, մարտի 2, էջ 4:
6. Ազդ, «Կոմունիստ», Բաքու, 1925, թիվ 50, մարտի 4, էջ 4:
7. Ազդ, «Կոմունիստ», Բաքու, 1925, թիվ 52, մարտի 6, էջ 4:
8. **Ասլան**, Երկու Վերհարն (Ընկերական), «Կոմունիստ», Բաքու, 1925, թիվ 34, փետրվարի 13, էջ 1:
9. **Արիստակեսյան Ռ.**, Գրական վավերագրեր (1920-1930-ական թվականներ), հ. 1, «Տիգրան Մեծ», Երևան, 2020, 830 էջ:
10. **Երզնկյան Ս.**, Չարենցի, թե գրական ռեակցիայի հետ, «Կոմունիստ», Բաքու, 1925, թիվ 47, մարտի 1, էջ 4:
11. **Երզնկյան Ս.**, Եղիշե Չարենց, «Վիշկա», Բաքու, 1925, թիվ 1, մայիս, էջ 51-52:

12. **Երզնկյան Ս.**, Սաննիկովի ծառայությունը, Գրական ֆրոնտում, Թիֆլիս, «Զակկնիգա», 1927, էջ 175-178:
13. **Խանոյան Ս.**, Մի գրական թյուրիմացություն, «Մարտակոչ», Թիֆլիս, 1925, թիվ 53, մարտի 6, էջ 1:
14. **Խանոյան Ս.**, Գրական աշխարհից (Ե. Չարենցի նամակի առթիվ), «Մարտակոչ», Թիֆլիս, 1925, թիվ 153, հուլիսի 7, էջ 2:
15. **Մկրտչյան Ա.** [Ա. Մ.], Հակոբ Հակոբյանը հայ պրոլետգրականության մեջ, «Կոմունիստ», Բաքու, 1925, թիվ 108, մայիսի 18, էջ 2:
16. **Չարենց Ե.**, Նամակ խմբագրության, «Վիշկա», Բաքու, 1925, թիվ 1, մայիս, էջ 75-78:
17. **Միմոնյան Ա.** [Աբել], Հ. Հակոբյանի 30-ամյա հոբելյանը Մոսկվայում, «Կոմունիստ», Բաքու, 1925, թիվ 24, փետրվարի 2, էջ 1:

References

1. Azd/Announcement, “Komunist”, Baku, 1925, issue 43, February 24, p. 4.
2. Azd/Announcement, “Komunist”, Baku, 1925, issue 44, February 25, p. 4.
3. Azd/Announcement, “Komunist”, Baku, 1925, issue 45, February 26, p. 4.
4. Azd/Announcement, “Komunist”, Baku, 1925, issue 46, February 27, p. 4.
5. Azd/Announcement, “Komunist”, Baku, 1925, issue 47, March 1, p. 4.
6. Azd/Announcement, “Komunist”, Baku, 1925, issue 48, March 2, p. 4.
7. Azd/Announcement, “Komunist”, Baku, 1925, issue 50, March 4, p. 4.
8. Azd/Announcement, “Komunist”, Baku, 1925, issue 52, March 6, p. 4.
9. **Aslan**, Yerku Verham (Ynkerakan)/ Two Verharns (Friendly), “Komunist”, Baku, 1925, issue 34, February 13, p. 1:
10. **Aristakesyan R.**, Grakan Vaverager (1920-1930-akan tvakanner)/ Literary Documents (1920s-1930s), Vol. 1, “Tigran Mets”, Yerevan, 2020, 830 pages.
11. **Yerznkyan S.**, Ch’arents’i, t’e grakan reaks’tiayi het/With Charents or literary reaction, “Komunist”, Baku, 1925, issue 47, March 1, p. 4.
12. **Yerznkyan S.**, Yeghishe Ch’arents’/ Yeghishe Charents, “Vishka”, Baku, 1925, issue 1, May, pp. 51-52.
13. **Yerznkyan S.**, Sannikovi tsarayut’yuny/ Sannikov service, Grakan frontum/ On the Literary Front, Tiflis, “Zakkniga”, 1927, pp. 175-178.
14. **Khanoyan S.**, Mi grakan t’yurimats’ut’yun/ A Literary Misunderstanding, “Martakoch”, Tiflis, 1925, issue 53, March 6, p. 1.
15. **Khanoyan S.**, Grakan ashkharhic (E. Charentsi namaki artiv)/ From the Literary World (On a Letter by Yeghishe Charents), “Martakoch”, Tiflis, 1925, issue 153, July 7, p. 2.
16. **Mkrtychyan A.** [A. M.], Hakob Hakobyany hay proletgrakanut’yan mej/Hakob Hakobyan in Armenian Proletarian Literature, , “Komunist”, Baku, 1925, issue 108, May 18, p. 2.
17. **Charents Y.**, Namak khmbagrutyany/ Letter to the Editorial, “Vishka”, Baku, 1925, issue 1, May, pp. 75-78.
18. **Simonyan A.** (Aqel), H. Hakobyani 30-amyas hobelyany Moskvaum/ H. Hakobyan’s 30-year anniversary in Moscow, “Komunist”, Baku, 1925, issue 24, February 2, p. 1.

Ռուզաննա Արիստակեսյան – բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ: Գիտական հետաքրքրությունները՝ 20-րդ դարի հայ գրականություն, սփյուռքահայ գրականություն, բնագրագիտություն: Հեղինակ է 2 գրքի, 60-ից ավել հոդվածների:

ORCID ID: 0000-0002-2748-0249
aristakesyanr@yahoo.com

Ruzanna Aristakesyan – Doctor of Philology, Institute of Literature after M. Abeghyan NAS RA. Scientific interests: history of Armenian literature of the 20th century, Armenian literature of Diaspora, textology. Author of 2 books and more than 60 scientific articles.

ORCID ID: 0000-0002-2748-0249
aristakesyanr@yahoo.com

Рузанна Аристакесян – доктор филологических наук, Институт литературы имени М. Абегяна НАН РА. Научные интересы: история армянской литературы XX века, армянская литература диаспоры, текстология. Автор 2-х книг и более 60-ти статей.

ORCID ID: 0000-0002-2748-0249
aristakesyanr@yahoo.com